

# ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՌԻՍՈՒՄՆ

## ՅԵՐԵՐԱՊԵ

— 100 —

(Տես հատ. ԵԱ. յ'էջ 127)

**ՓԱՂՂԻԱՅԻ** հայաբնակ եղան որ յառաջ քան զամենսին մեր զարուն գերմանացի գիտնոց մտադրութիւնը հրաւիրեցին ի վերայ հայկական մասնաւորութեան: Ասոնց մէջ առաջինն՝ ժամանակի կարգաւ եղաւ Կարլ-Փրեդերիկ Նայման. ծնաւ ի 1790 ի Հոլայքմանստոֆ, մօտ ի Պամպէրկ, ուր իր հայրն հրէայ աղքատ վաճառական մ'էր. և երիտասարդութիւնն անցուց պարսպելով ի վաճառականութիւն, ու 1817 ին գնաց ի Հայտէլպերկ՝ ուսման ընթացք կատարելու գիտամօք: Հոն աշակերտելով Հէկէլի՝ բողոքականութիւն ընդունեցաւ, և յետոյ Միւնխի բանասիրական հոգեւոր դպրոց մը մտաւ: 1819ին ուսուցչութեան յարմարութեան վկայականը ձեռք ձգելով, գնաց գլխաւորել իր ուսումը ի Կէթինկէն: 1821էն մինչև ի 1825 վիւրցպուրկի և Սիլիւրայի վարժարանաց մէջ ուսուցչութեան պաշտօն վարեց. բայց բանասիրականաց վարդապետութեանց հետեւող երեւելով, պաշտօնէն զրկուեցաւ: Այն տարին ստիպուելով մատենագրական ուսմամբը զբաղիլ, արեւելեան լեզուներու ետեւ ինկաւ: Բաւական ժամանակ կեցաւ ի վէնետիկ, յաճախելով ի Սուրբ Ղազար յուսումն հայերէն լեզուի, ուստի ուղևորեցաւ յաշխարհն ճիւղն՝ անոնց գրոց հաւաքմունք մը ընելու նպատակաւ: Ի դարձին՝ հաւաքած գրքերէն երկու հազարը Պերլինի մատենադարանին յանձնեց, ու մնացած տասն հազարն պարգևեց պաւարական կառավարութեան. և ի փոխարէն՝ Մոնաքայի համալսարանին մէջ հայերէն ու սինէական լեզուաց և ազգագրութեան ուսուցիչ անուանեցաւ (1833): 1852ին պատմական ուսմանց դասախօսութեանցը մէջ յայտնաձ ազատական գաղափարաց համար պաշտօնէն զրկուեցաւ. մնաց ի Մոնաքայ մինչև ի 1863, յետոյ անցաւ ի Պերլին՝ ուր իր բնակութիւնն հաստատելով մեռաւ ի 1870 մարտ 17:

Այլ և այլ հրուածներ հրատարակած է Նայման սինէական, ազգագրական և պատմական ուսմանց և հետազոտութեանց վրայ. բայց մեր նպատակն է միայն հայկականին վրայ խօսիլ: 1829ին Ասիական ճոր օրագրին մէջ հրատարակեց (Հատ. Գ. 46—86, 97—153) Դաւթի Անյաղթ փիլիսոփայի հրուածոց վերայ երկասիրութիւն մը, և ի մասնաւորի անոր Արիստոտելի

քանի մի գրութեան թարգմանութեանց վրայ. (Mémoire sur la vie et les ouvrages de David, philosophe arménien de V siècle de notre ère, et principalement sur ses traductions de quelques écrits d'Aristote). 1830ին յանգլիական լեզու ի լոյս ընծայեց Եղիշէի Վարդանանց պատմութիւնը. (The history of Vartan of the battle of the Armenians; containing the Persians and Armenians, by Elisæus bishop of the Amadunians, translated from the Armenian by C. F. Neumann; London, Oriental Translation fund. 1830: Տարի մը ետքը հրատարակեց նաև զհամառօտ պատմական գրութեան վահրամ քաղուելոյ, ի նոյն անգլիական լեզու. (Vahram's Chronicle of the Armenian kingdom of Cilicia during the time of the Crusades, translated from the original Armenian with notes and illustrations by C. F. Neumann, London 1831: Գաղղիական թարգմանութիւն մը այս գրութեան հրատարակեցաւ ի Հանդէսն արևելից թարգմանութեամբ Ս. Պետրոսեան ի 1864. յ'էջս 245—254, 315—325: Եղիշէի թարգմանութեան վրայ հետեւեալ քննադատութիւնն կ'ընէ Նեւ. « Միւնիխի իմաստուն ակադեմականին թարգմանութիւնը, կ'ըսէ, ազատ թարգմանութիւն մ'է, որ կարծես թէ ոչ այնչափ բանասիրական տեսակէտով՝ որչափ պատմականին համար եղած կ'երևնայ. ուստի և ի բնագրէն այլ և այլ կտորներ մէկգլի ձգեր է, երկրորդումն կամ յերկարաբանութիւն համարելով, մանաւանդ որոնք իրեն համար ճառաբանականք կամ ճամբարականք կարծուեր են: Անճշգոթութիւններն որոց մէջ ինկած է, կրնան իրենց մեկնութիւնն զանեղ յայնմ գրութեան՝ զոր կարծեր է գործածել, և նաև ի դժուարութեան ճշգրիտ միշտ զիմաստս բնագրին, որ ոչ միշտ զիւրիմաց է, և ուրիշ հայ մասենագրաց նման՝ ունի իր յատուկ քերականական դարձուածներն... »

Գերմանական ուսումնական հանգիսից մէջ ամենէն յառաջ աշխատակից եղաւ Նայման՝ Լայփցիկ հրատարակուած Հերմէս կամ Գեմնադատական—մեւ տեմնագրական տարեգիրք, Hermes oder Kritisches Jahrbuch der Literatur) թերթին մէջ. և ի հատորն ԼԳ (էջ 177—204) հատուած մը հրատարակեց. « Հայկական լեզու և նորա մատենագրութիւնն, Առաջին ժամանակ » խորագրով. (La langue arménienne et sa littérature, I<sup>re</sup> époque). Մեծապէս հետաքննական պատմական տեսութիւն մ'է հայկական ուսմանց ի Գերմանիա: Բաց ի Աւգերեան Պրանս հայ—անգղ և անգղ հայ բառգրոց, կը խօսի հեղինակն ի Միլիթարեանց Վենետիկոյ հրատարակուած Մովսիսի Խորենացոյ (1827) և Եղեղկայ գրոց վրայ (1826). յորմէ կը թարգմանէ Որմզիի և Արմենիոյ ծննդեան նշանաւոր հատուածը. 1833ին Վիէնայի Մատենագրական տարեգիրք հանդիսին ԵԲ հատորին մէջ (58—69) յօդուած մը հրատարակեց նոյնպէս ի Ս. Ղազար տպագրուած փառաստի Բիւզանդայ պատմական գրոց վրայ (1832): Հայ լեզուին համար կ'ենթադրէ թէ մերձաւոր ազգակից ըլլայ պահլաւին, և ի հաստատութիւն իր գրութեան

Գուլիելմ Զումպոլա (Abh. der histor. philol. Klasse der Kön. Ak. der Wiss. zu Berlin, 1829 տարւոյն և ի 1832 հրատարակուած մէկ յօդուածը, յորում հաստատութեամբ կը պնդէ թէ հայկական հնդկագիտման ճիւղին ամենէն աւելի հարուստ լեզուաց մէկն է, և թէ բանասիրական ու պատմական տեսակետով այս լեզուն ուսումն ուրիշ ո՛ր և իցէ լեզուաբանական ասպարիզին մէջ ամենէն աւելի կարեւորներէն և հետաքննելին է : Այս յօդուածէն վերջը կը խօսի Նայման Մխիթարայ Հերացոյ Զերմանց գրքին վրայ, որ ի 1832 տպագրութեամբ հրատարակուած էր ի Ս. Ղազար : C. F. Ilgen's Zeitschrift für die historische Theologia Լայփցիկի ուսումնականութիւն շորորդ հատորին մէջ (1834, Մասն Ա 71—78), Նայման թարգմանութեամբ հրատարակեց Էդնբլայ ընդդէմ աղանդոց դրոց չորրորդ մասը, « ընդդէմ Մարկիոնի » (Marcions Glaubenssystem) տեղեկութեամբ մը այն յարաբերութեանց որ ի վարդապետութեան Մարկիոնի և փարսիականին : Նոյն հատորին մէջ (Մասն Բ. 126—198) տպագրեց զթարգմանութիւն հռչակաւոր Ատենարանութեան Սրբոյն Ներսիս Լամբրո-Պաւլոյ արքեպիսկոպոսին Տարսնի որ ի Կիլիկիա յ' ԺԲ դարու, ներածութեամբ և ծանօթութեամբ. որ արդէն Աւգերեան Հ. Յարութեան իտալական թարգմանութեամբ և տպագրութեամբ (1812) ծանօթ էր արեւմտեայ բանասիրաց : Նոյն 1834 թուականին հրատարակեց Նայման զգերման թարգմանութիւն Սէրկէյ Հինքա ոռս բանասիրին մէկ գրուածքը, « Պատմութիւն գաղթականութեան ի Ռուսաստան քառասուն հազար հայազգեաց Արապատական գաւառի ի 1828 » : Geschichte des Uebersiedlung von 40,000 Armenien, welche im Jahre 1828 aus der Persischen Provinz Aderbaidshahan nach Russland auswanderten, Leipzig, 1834 : Վերջապէս ի 1836 հրատարակեց անուանի արեւելագէտն իր ամենէն աւելի հետաքննական երկասիրութիւնն. « Ճշակ գրականական պատմութեան Հայաստանի, ազատութեամբ ըստ գրուածոց Մխիթարեանց » : Essai d'une histoire de la littérature arménienne, rédigée librement d'après les ouvrages des Mékhitaristes—Versuch zu einer Geschichte den armenischen Literature nach den Werken der Mechitaristen frei bearbeitet etc : Տասնութ գլուխներու բաժնուած և ըստ դարուց գասաւորուած է այս գիրքը որոյ վրայ 1849ին յաւելուած մ'ալ ըրած է հնդինական յորում խորագրովն Beyträge zur armenischen Literatur. München, 1849, կը խօսի Մովսիս Կազանկատուացոյ ու Արիստակիսի Լաստիլերացոյ գրուածոց վրայ : Զենք կարծեք թէ մեր այս յիշատակածներէն զատ ուրիշ գրուածք մը հրատարակած ըլլայ Նայման՝ նկատմամբ հայ լեզուի, մատենագրութեան և ուսմանց :

Պետերմանի վրայ յիսուած, կարեւոր կը համարինք համառօտ յիշատակութիւն մը ընել իր յարաբերութեանց ընդ բազմաթիւ գիտնականաց արեւմտից և ընդ հնդինակի վերջ Հայաստանի կոչուած գրքին : Ծանօթ է բանասիրաց

հմտից որ խաչատուր Աբովեան ծնած է ի 1806 Երևանի մերձակայ Գանաքեռ գիւղը: Տար տարուան հասակին հօրը առաջնորդութեամբ տարուեցաւ ի վանս Լճիվածնի ի դաստիարակութիւն, եկեղեցական վիճակի զինք ընծաւ յեւլու դիտմամբ: Անկէ անցաւ ի դպրոցն Ներսիսեան որ ի Տփլիս, ուր և մնաց ջամն 1828: Սարկաւագութեան աստիճանն ընդունած էր արդէն՝ երբ Տորքատի բնաբանական ուսմանց հոչակաւոր ուսուցիչն փրեզերիկ Պարրոզ (1794—1844) բազմաթիւ աշակերտներով եկաւ յԼճիվածն, Արարատ լեռը ելլելու մտքով (Reise zum Ararat, Berlin, 1834). Երիտասարդն Աբովեան փափաք և յոժարութիւն ցըցուց անոնց թարգմանն ըլլալ. և այդ պաշտօնը այնպիսի անողութեամբ ի գլուխ տարաւ որ զարմացուց հոչականուն ուղեւորն. և սիրով յանձնառու եղաւ իր աղայանաց Եւրոպայի մէջ օրինաւոր ուսում մը ընելու միջոցներն դիտացընելու: Ընտանիքն հակառակեցան իր այս մտածութեանն ու փափաքին. բայց Եփրեմ կաթողիկոս՝ որ ինքն ալ երկար ուղեւորութիւններ ըրած էր, չկրցաւ դէմ կենալ պատանւոյն թախանձագին աղերսանաց և սրտաշարժ խօսքերով օրհնեց զինքն յաղորդութիւն մաղթելով նմա: Պարրոզ դառնալով ի Տորքատ յայտնեց իր կարծիքը, թէ Լճիվածնի մատենադարանը պէտք է որ գտնուին հայկական թարգմանութիւնք յոյն դասական մատենագրութեան և հին հեղինակաց, որոց երկասիրութեանց սկզբը նազիրք հիմա կորսուած են: Մէկէն Ֆէտոր Կլոսիոս՝ վարդապետ և ուսուցիչ իրաւագիտականին, 1833 փետրուարի 4ին գրեց առ կաթողիկոսն՝ փափաքելով գիտնալ այս ենթադրութեան ստուգութիւնը: Եփրեմի յաջորդն Յովհաննէս Բ պատասխանեց թէ չկան ի գրատանն այդպիսիք. սրովհետեւ երկիրը տակնուվրայ ընող պատերազմաց պատճառաւ բոլոր գրքերն կորսուած էին: Մանդց ի նմին ժամանակի, թէ ի Հայաստան հարկերի չափ կանգուն մնացող շխնքերէն տասն եւեթ միաբանք ունին, բայց անոնք ալ գրատուն չունին: Այն տեսններն էր որ Պրոսէ իր յաշխարհին Վրաց և ի Հայաստան ըրած հնախօսական ուղեւորութեան երրորդ Տեղեկագրով ստորագրեց և զվանս Լճիվածնի և անոր մատենադարանը, և թէ ինչպէս 1828էն ի վեր ձեռք զարնուած էր հոն եղող գրչագրաց ցուցակի մը խմբագրութեան: Կաթողիկոսին պատասխանը՝ Աբովեան թարգմանեց ի գերման լեզու, որ և հրատարակեցաւ ի *Dorpatser Jahrbücher für Literatur, Statistik, und Kunst, besonders Russlands*, ի Ռիկա և ի Տորքատ, Հատ. Ա. 1833, յ'էջս 90—92: Այս առթիւ յիշեցնել կարեւոր կը համարինք որ նոյն չորրորդ հատորին մէջ ամփոփուած է (385—420 և 502—520) Ինճիճեան վարդապետի երկասիրութիւն մը Ռուսաց իշխանութեան տակ գտնուող Հայաստանի մասին վրայ, զոր Ե. Ա. Հերմանն թարգմաններ էր ի ռուս բարբառ:

Աբովեան դառնալով ի Տորքատ, Տփլիսի դպրոցին ուսուցչի պաշտամամբ կը պարապէր, երբ տեղւոյն այցելութիւն մը ընելով ազգիս արդէն ծանոթ իր ուղեւորութեան գրուածքով՝ Մորից Վակնէր անուանի ճանապարհորդն պաւարացի (1813—1887) զարմացաւ ընդ յառաջագիմութիւն աշակերտելոյն ի

վարժա գերմաններէն լեզուի, և այն սիրոյն և համակրութեան վրայ զոր իրենց փութաջան և եռանդուն ուսուցչին կը ցուցնէին: Կովկասի քաղաքաւ պետ Նէլզհարզ զօրավարին խնդրանօքը՝ ընկերեց նմա Արտիւան, երբ 1843 ին հիւսիսային կողմերը քննեց, և հետեւեալ տարւոյն զհարաւստիղմ Արաւատայ (Reise nach dem Ararat und dem Hochlande Armeniens), ի Reisen und Länderbeschreibungen der älteren und neueren Zeit, herausgegeben von Dr. Eduard Widenmann und Dr. Hermann Hauff, 35 livr. 1848, p. X. 332: Արտիւան ծանօթ էր նաեւ Հերման Աբիխի որ 1845 տարւոյն յուլիսի 29ին Արարատայ վերելքն ըրաւ: Նշանակենք առ տեղեաւ որ այս երկրագիտին օգնեցին Նայման և Գաբրիէլ Խատիսեան, որ նոյն միջոցին ի Տորբատ կը գտնուէր, ի պատմական մասին իր ուսումնասիրութեանց ի վերայ երկրաշարժից ի Հայաստան. (Geologische Forschungen, 3ter Teil, Wien, 1887, յ'էջ 433—447): Նոյն աստիճանին փրեզերիկ Մարտին Բուզէնսդէտ քերթող, մաստենագիր և ուղեւոր, ճանապարհորդութիւն մը ըրաւ ի Հայաստան, Ռուզէն Գեորգ անուանի արեւելագիտին հետ. որ ծանօթացաւ ընդ Արտիւանի, և որոյ խօսքը կ'ընէ յաճախ « Հազար և մի աւուրք յարեւել » կոչուած բանաստեղծական երկասիրութեան մէջ. (Tausend und ein Tag im Orient, հրատարակեալ ի Պերլին ի 1850): Բուզէնսդէտ՝ ի Տիփիսի մանկավարժական հաստատութեան մը ուղղիչ եղաւ քանի մի ժամանակ, այցելութիւն մ'ալ ընելով յԷջմիածին՝ (1844 ի մարտի) սիրալիր ընդունելութիւն գտաւ Ներսէս կաթողիկոսէն որ զինքը ճանչցած էր ի Մոսկուա: Արտիւան ձեռագիր տետրակ մը նուիրեց հայկական ազգային երգերու յաշիւարհիկ լեզու, անոնց թարգմանութեամբն ի գերմանական լեզու. և խոստացաւ երկրորդ տետրակ մ'ալ նման երգոց զրկել քիչ աստենէն: Պետերմանն կարգաց ու մեկնեց այս բանաստեղծութիւններն. և յորոց քանի մը ընտրեւագոյնքը գերմանական ոտանաւորի վրայ առնելով հրատարակեց Բուզէնսդէտ, ինչպէս գերեզմանական երգ մը, և « Հոռոսխան և Հոխիսիմէ » կոչուած ազգային երգ մը:

Բարեկամացաւ Արտիւան նաեւ Հակոբաւսէն մարգիդին հետ (1792—1867), որ Transkaukasia խորագրով ի Լայփցիկ հրատարակուած (1856) գրքին հեղինակն է. և որոյ առաջին մասը նուիրուած է մասնաւոր կերպով մը Հայոց ընկերական կեանքին: Հեղինակն հայերէն լեզուի տեղեկութիւն չունէր. բայց Արտիւան իր քոթն եղած բոլոր ձեռագիր տեղեկութիւններն հաղորդեց, և զորս հաւաքեր էր իր հայերենացալ սովորութեանց վրայ գրուածք մը հրատարակելու դիտաւորութեամբ: Հակոբաւսէնի երկասիրութիւնն մեծապէս հետաքննալան է անոյ մասնաւոր՝ որ մէջ կը բերէ այն մանրամասնութիւններն զորս հաղորդեր էր իրեն կաթողիկոսն Ներսէս, Տիփիսի համալսում դպրոցին հիմնադիրն, և ուր ուսուցիչ կարգեր էր փարիզէն կոչելով՝ զհայազգին Ջրպետեան: Կ'աւանդէ թէ Ներսէս՝ հայ գրաւոր և խօսուած լեզուներն կը համեմատէր ռուման և լատին լեզուաց հետ, և աւելցնելով թէ

աշխարհիկ լեզուի վերլուծական կազմութիւնը կը յառաջագայէր թաթար լեզուին ազդեցութենէն: Իսկ Աբուլեան՝ որ վեց լեզու գիտէր, կը պնդէր թէ զարաթ լեզուն այնչափ զփուարին է՝ որ կարող չէր զիւրութեամբ խօսել զայն, թէպէտ և սորված էր զքերականութիւն, ու քանի մը մատենագրաց ամբողջ գրքերն ի բերան սերտած: Հակաթաւան շմոռցաւ նաև զհայկական folk-lore, ի վերջ առաջնոյ հատորոյն զնելով (318—335), այլ և այլ ժողովրդական զրոյցներ (légendes) Աբուլեանի թարգմանութեամբ: Դանօթ է արդէն թէ ինչպէս այս համակերելի անձն անհետացաւ ի 1848, և ոչ ոք կրցաւ իմանալ թէ ի՞նչ եղաւ իրեն. սակայն իր յիշատակը միշտ սիրելի եղած է և պիտի բլլայ թէ՛ ազգայնոց և թէ՛ եւրոպացի հայագիտաց, և որոյ համար այս տարի (1893) Ռուսահայք կ'աշխատին յիշատակարան մի կանգնել:

Այն ճանապարհորդաց, որոց վրայ պիտի սկսինք խօսիլ, մեզի տուած և գրով աւանդած տեղեկութիւնք պէտք է ուսումնասիրուին անոնցմէ՝ որ կը փափաքին տեղեկութիւն ունենալ Հայոց քաղաքական և ընկերական վիճակին վրայ, և որոյ ծանօթութիւնն անհրաժեշտ հարկաւոր է յուսումն իրենց պատմութեան և մատենագրութեան: Անոնցմով լիուի կ'արդարանայ իրենց զարմանքն այն ժողովրդեան վրայ, որ «յանյիշատակ ժամանակաց բնակութիւն հաստատեր է ի մերձակայս նուէրական լեռինն Նոյի, և որ քրիստոսական կրօնից յայտնուելէն ետքը՝ օտար և թշնամի ժողովրդոց մէջ հաստատուն մնացեր է Արարատայ չորս կողմը, իբրև ի վերայ անտեղիտալի վիմի հաւատոց Գրիստոսի, և յորմէ երբէք օտարացած չէ» (Պարբոթ, Ա. 102):

Շարունակելի

## ՀԱՅՔ ԵՒ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ազգային և օտար բամասիրութիւն՝ տարիներէ ի վեր, մեր պատմութեամ տեսակիտով մեծ կարեւորութիւն ունեցող խնդրովս զբաղած է և դեռ եւս կը զբաղի, ինչպէս ծանօթ է ըմթերցողաց: Յօժարափոյթ կը հրատարակենք խմբագրութեամս ուղղուած այս մօր գրութիւնն ալ, որ հետաքրմակամ տեսութեամբք և հմուտ ոճովմ ու տեղեկութեամբք մեծապէս օգտակար կըմայ ըլլալ բամասիրաց: Հրատարակած ատենմին՝ աւելորդ կը սեպենք յայտարարել, թէ բամիրում հեղինակին, Նազարէթեան Ս. Վարդապետին կը մնայ՝ ամենայն պատասխանատուութիւն իր կարծեացը եւ եմթաղրութեամբք:

**Ս**ՈՒՐԲ և անսուրբ, արի և անարի, ընտասուն և վայրենի, համբոյր և վայրագ, խրոխտ և սէգ, հմայիչ և հրապուրիչ աւրիական սերման զարմանալի մի մասն երեւի Հայ ժողովուրդն, մինչ հազիւ մարդկային ընկերութիւնն կը խմբէր յաշխարհիս: